



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 30 » 09 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000076

Ձեռնարկողը՝

«ԿԱՌԱ» ՍՊԸ

Տավուշի մարզ, ք. Դիլիջան,
Կամարինի փ. փուն 29

Գործունեությունը՝

**Տավուշի մարզի Ֆրոլովա Բալկա ածխաթթվային
հանքային ջրի հանքավայրի թիվ 1M հորատանցքից
հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



(Handwritten signature)

Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000076

<<30>> 09 2019թ.

Տավուշի մարզի Ֆրոլովա Բալկա ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1M հորատանցքից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնակող՝ <<Կառա>> ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության (ՇՄԱԳ) հաշվետվություն, Նախագծային փաստաթղթեր

Տեղադրման վայրը՝ Տավուշի մարզ, ք. Դիլիջան /Ա կատեգորիա/

Ընկերությունը նախատեսում է՝ Տավուշի մարզի Ֆրոլովա Բալկա ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1M հորատանցքով հաշվարկված և հաստատված 1.8լ/վրկ կամ 155.5մ³/օր պաշարից, 0.9լ/վրկ կամ 28382.0մ³/տարի հանքային ջրի արդյունահանում արդյունաբերական (շաղցման) նպատակով, 50 տարի ժամկետով:

Ֆրոլովա Բալկա ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է Դիլիջան քաղաքից 8.0կմ դեպի հարավ-արևմուտք, Դիլիջան-Վանաձոր ճանապարհից մոտ 2.0կմ դեպի հարավ, նույն անունը կրող նեղ կիրճում: Ֆրոլովա Բալկա ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի մանրակրկիտ հիդրոերկրաբանական հետախուզական աշխատանքները կատարվել են 1982-1983թթ.-ին, որի արդյունքում մեկ հորատանցքով (1M) հաշվարկվել և նախկին ԽՍՀՄ Պաշարների Տարածքային Հանձնաժողովի (ՊՏՀ) կողմից 31.10.1983թ.-ի դրությամբ (ըստ 16.12.1983թ. արձանագրություն թիվ 271) հաստատվել են Ֆրոլովա Բալկա ածխաթթվային հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործողական պաշարները, այդ թվում.

- հանքային ջրի պաշարներ՝ 1.8լ/վրկ կամ 155.5մ³/օր,
- ազատ ածխաթթու գազի պաշարներ՝ 0.00234տ/մ³ կամ 2.34գ/լ:

Հանքավայրի ջուրը իր քիմիական կազմով և առանձնահատկություններով մոտ է «Դարասուն» և «Էսենտուկի» հանքային ջրի տիպին: Այն կարելի է հաջողությամբ օգտագործել որպես խմելու բուժիչ-սեղանի ջուր, ինչպես շաղցման, այնպես էլ հանքաջրաբուժական նպատակով:

Թիվ 1M հորատանցքով կտրվել է 3 ջրատար հորիզոններ՝ տեղադրված 0.5-22.0մ (քաղցրահամ ջրի) և 67.0-80.0 մ, 101.0-125.0 մ (հանքային ջրի) խորությունների վրա: Հանքային ջրի ստատիկ մակարդակը 1.57մ երկրի մակերևույթից բարձր է, ջերմաստիճանը՝ 16.2°C, ծախսը՝ 1.8լ/վրկ է, հանքայնացումը՝ 3.1-3.4գ/լ է, լուծված



ածխաթթու գազի պարունակությունը՝ 1.52գ/լ, իսկ ազատ գազինը՝ 2.34գ/լ: Ըստ քիմիական կազմի այն հիդրոկարբոնատային, կալցիում-մագնեզիում-նատրիումային է: Հանքավայրի հանքային ջրի շահագործողական պաշարները կարող են օգտագործվել շրջանային և բուժման համար: Հորատանցքի բացարձակ բարձրությունը կազմում է 1548.0մ, իսկ տեղագրական կոորդինատները հետևյալն են.

I. CK-42 կոորդինատների համակարգով		II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով	
X = 4508070	Y = 8482200	X = 4508063	Y = 8482098

Բոլոր հորատանցքերում առաջին ջրատար գոտու ջրերը մեկուսացվել են ամրակապող պողպատյա խողովակներով և կատարվել է արտախողովակային տարածքի ցեմենտացիա:

Ֆրոլովա Բալկա ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի մանրամասն հիդրոերկրաբանական հետախուզական աշխատանքների ավարտից հետո բոլոր հորատանցքերը լիկվիդացվել են, բացի թիվ 1M հորատանցքից, որով հաշվարկվել և հաստատվել է հանքավայրի հանքային ջրի շահագործողական պաշարը: Հետագայում թիվ 1M հորատանցքը վերակահավորվել է չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով: Նկատի ունենալով, որ թիվ 1M հորատանցքը գտնվում է Ֆրոլովա Բալկա գետի նեղ կիրճի ողողահունում, ինչպես նաև հնարավոր չի եղել հաղթահարել տեղանքի պայմանները՝ առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին կառուցվել է 6.0x7.0մ չափսերով: Գոտու սահմաններում գետին զուգահեռ մոտ 15.0մ երկարությամբ կատարվել են ափը ամրացնող աշխատանքներ: Կառուցվել է մոտ 1.5մ բարձրությամբ պատնեշ: Այն հնարավորություն է տվել հորատանցքի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքը գետի վարարումների ժամանակ պաշտպանել մակերևութային աղտոտված ջրերի ներթափանցումից:

Ֆրոլովա Բալկա ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1M հորատանցքի հանքային ջրի արդյունավետ և պատշաճ շահագործման համար նախատեսում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. անհրաժեշտության դեպքում իրականացնել 1M հորատանցքի հորի մաքրման աշխատանքներ՝ չնախատեսված աշխատանքների ծախսերի հաշվին,
2. շատրվանող ջրհավաք հորատանցքի կահավորում համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, համաձայն ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն «Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու մասին» որոշման պահանջներին համապատասխան,
3. իրականացնել սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիտորինգ) շահագործողական հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի, ինչպես նաև հողի աղտոտվածության նկատմամբ,
4. շատրվանող ջրհավաք հորատանցքից ջրառն իրականացնել բնական ինքնահոսի պայմաններում՝ հանքավայրի հիդրոդինամիկ և հիդրոքիմիական պայմանները խախտումից խուսափելու համար, հորատանցքի վրա կիրառելով փականային ռեժիմ՝ նախատեսելով հանքային ջրի թողք, բացառելով ջրահեռացվող ջրի օգտագործման հնարավորությունը,



5. ժամանակակից արտադրական սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերում և տեղադրում,

6. գործարանի տարածքի բարեկարգում և այլ չնախատեսված աշխատանքներ:

Հանքավայրը շահագործվել է սկսված 1999թ.-ից տարբեր կազմակերպությունների կողմից: Մինչ այժմ հանքավայրը շահագործվել է «Էմ Այ Բի Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից համաձայն «Ը ներգետնիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից 18.12.2012թ. տրամադրված օգտակար հանածոյի ՇԱԹՎ-29/378 արդյունահանման թույլտվության (տրամադրված 0.9/վրկ հանքային ջրի ջրաքանակով) և կնքված թիվ ՊՎ-378 պայմանագրի, որի գործողության ժամկետն ավարտվել է 2019թ.-ի հունիսի 4-ին:

«Կառա» ՍՊԸ-ն իր ջրապահանջն ապահովելու համար շատրվանող ջրհավաք հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կկահավորի համապատասխան սարքավորումներով (փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր և այլն) և առանձին կշահագործի: Սույն աշխատանքները կիրականացվեն «Կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Ինչ վերաբերվում է հորատանցքի համատեղ շահագործման հետ կապված հնարավոր լուծումներին, ապա դրանք կարող են համապատասխան քննարկման առարկա դառնալ այն ժամանակ, երբ ընկերությունները կստանան հանքարդյունահանման թույլտվություն:

Ընկերությունը հանքային ջրի շշալցման գործընթացը նախատեսում է իրականացնել իր սեփականությունը հանդիսացող Դիլիջան քաղաքում գտնվող նախկին հանքային ջրերի գործարանի՝ 455.0մ² մակերեսով, տարածքում: Ածխաթթու գազի կորզում չի նախատեսվում, ինչը պայմանավորված է դրա փոքր քանակով՝ լուծված CO₂ գազի պարունակությունը կազմում է 1.52գ/լ, իսկ ազատ CO₂ գազինը՝ 2.34գ/լ: Ազատ ածխաթթու գազը ընկերությունը կգնի Լիճքի ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրից, որտեղ տարբեր ընկերությունների կողմից իրականացվում է ազատ ածխաթթու գազի կորզում ու կատարվում է 40.0 լիտրանոց բալոնների լիցքավորում, որի տարողությունը կազմում է 20.0 կգ ածխաթթու գազ:

Տարածքի հողի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերության օբյեկտների: Հեռավորությունը հանքավայրից մինչև գործարանի տարածք կազմում է 5.0կմ:

Հանքային ջրերի հանքավայրերի ջրհավաք հորատանցքերի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումն ապահովելու համար նախատեսվում է.

1. հանքային ջրի հանքավայրի շահագործումն իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտու առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում,

2. ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումն իրականացնել ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով՝ հորատանցքից ՊՊՀ-ի կողմից հաստատված պաշարների չափից ավելի արդյունահանումը բացառելով,

3. ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքի շահագործումն իրականացնել հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան,



4. ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ իրականացնել սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիթորինգ),

5. հանքային ջրերի շահագործման ժամանակ ապահովել ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:

Հանքային ջուրը հանքավայրի թիվ 1M հորատանցքից ամենազնաց ավտոմոբիլ-ցիստեռնով (խմելու որակի) կտեղափոխվի գործարանի շրջանի արտադրամաս: Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից, գոյություն ունեցող ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և կոյուղագծեր, այլ օժանդակ շինություններ չեն նախատեսվում:

Ընկերությունը նախատեսում է գործարանի հանքային ջրի շրջանի արտադրամասում տեղադրել շրջանի հոսքագիծ (0.33, 0.5 և 0.7 լիտրանոց ապակյա տարաներ)՝ 6000 հատ շիջ մեկ ժամում արտադրողականությամբ:

Ժամանակակից սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերման և այլ անհրաժեշտ աշխատանքների համար կատարվելու է մոտ 348.0 միլ. դրամ գումարի չափով ֆինանսական ներդրում, համայնքում ստեղծվելով մոտ 30 աշխատատեղ 200.0 հազ. դրամ միջին աշխատավարձով: Բացի դրանից ընկերությունը պատրաստ է յուրաքանչյուր տարի աջակցություն ցուցաբերել համայնքի կարիքների բավարարման համար:

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում ընկերությունը նախատեսում է զուգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ռեժիմային դիտարկումներ, որը կապահովի զերծ պահել ջրերն աղտոտումից, սպառումից և տեխնաձին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Հանքավայրի թիվ 1M հորատանցքում և շրջանի գործարանում նախատեսվում է իրականացնել մշտադիտարկումներ (մոնիթորինգ) ջրի ծախսի, ճնշման (մակարդակի) և ջերմաստիճանի չափումներ, ինչպես նաև կկատարվեն ջրի և հողային ծածկույթի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար: Այս աշխատանքների կատարման համար յուրաքանչյուր տարի նախատեսվում է ծախսել 1500.0 հազ. դրամ:

Հանքավայրի հանքային ջրի արդյունահանման ժամկետը լրանալուց հետո ջրհավաք հորատանցքի բերանի փականը կփակվի և կկապարակնքվի: Դրանով իսկ հանքավայրը կկոնսերվացվի: Հանքի փակման աշխատանքների կատարման համար նախատեսվում է ծախսել 1500.0 հազ. դրամ:

Վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերի փորձաքննության արդյունքները, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումներից և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ստացված կարծիքները, առողջապահության նախարարության դիտողություններն ու առաջարկությունները, Դիլիջանի համայնքի տարածքում իրականացված հանրային քննարկումների արդյունքները, կարելի է անել հետևյալ եզրահանգումներ:

Շինարարության և շահագործման ընթացքում «Կառա» ՍՊԸ կողմից «Ֆրոլովա Բալկա ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1M հորատանցքից հանքային ջրի արդյունահանման» նախագծի ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Նախագծում ներառված են հորատանցքը գետի վարարումներից պահպանելու, հանքային ջրի արդյունավետ և



պատշաճ շահագործման, աղբահեռացման, աղմուկի մակարդակի, թափոնների հավաքման և դրանց հնարավոր ազդեցությունների մեղման միջոցառումները: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին:
2. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական, բուսական աշխարհ և այլն) մոնիթորինգի արդյունքները, հետնախագծային վերլուծության ծրագիրը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը: Մոնիթորինգի արդյունքների չբավարարման դեպքում անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Կառա>> ՍՊԸ կողմից ներկայացված Տավուշի մարզի Ֆրոլովա Բալկա ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1M հորատանցքից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝



Կ. Մովսիսյան